ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԱԼԲԱՆԻԱՆ

ՀԵՆՐԻԿ ՍՎԱԶՅԱՆ

Գավգամելայի ճակատամարտից հետո (մ. թ. ա. 331) Ալեքսանդր Մակեդոնացին, գրավելով Աքեմենյան Պարսկաստանը, Միջին Ասիան ու Հնդկաստանը, վերջնականապես հաստատվում է Բաբելոնում, որը դարձել էր նրա հսկայածավալ պետության մայրաքաղաքը։ Նվաճված երկրների նկատմամբ նա վարում էր այսպես կոչված «պարսկա-հելլենիստական» մի միասնական պետություն ու ժողովուրդ ստեղծելու քաղաքականություն, պահպանելով նախկին քաղաքական կազմակերպությունները՝ սատրապությունները, բայց փոփոխելով սատրապներին ու սահմանափակելով նրանց ինքնիշխան կառավարումը։ Մասնավորապես նա սատրապներին զրկեց զինվորական իշխանությունից, դրամահատման, հարկերի հավաքման ու ֆինանսական մի շարք գործերի տնօրինման իրավունքից, որոնցից նրանք օգտվում էին Աքեմենյանների ժամանակ։ Հին սատրապներին նորերով փոխարինելիս Ալեքսանդրը, սակայն, չէր խուսափում այդ պաշտոնում նշանակելու նաև Աքեմենյանների նախկին սատրապներին, մանավանդ, երբ վերջիններս նրան հավատարմության ցույցեր էին անում։ Առաջնորդվելով այդ սկզբունքով, Գավգամելայի ճակատամարտից շատ չանցած՝ մ. թ. ա. 328 թ.[1]*, Ալեքսանդր Մակեդոնացին Մարաստանի սատրապ է նշանակում դեռևս Աքեմենյանների օրոք այդ նույն պաշտոնը վարած Ատրոպատեսին*[2]*։ Ատրոպատեսը պատմության մեջ առաջին անգամ հիշատակվում է Գավգամելայի ճակատամարտի կապակցությամբ, ուր նա հանդես էր գալիս պարսից արքա Դարեհ III-ի կողմում և որպես Մարաստանի սատրապ առաջնորդում էր մարերին*[3]*։ Ինչպես սովետական, այնպես էլ եվրոպական շատ գիտնականներ գտնում են, որ Ատրոպատեսը Գավգամելայի ճակատամարտին մասնակցում էր որպես Մարաստանի սատրապ։ Սակայն Զ. Յամպոլսկին կարծում է, որ Ատրոպատեսը Գավգամելայի ճակատամարտին մասնակցելիս ոչ միայն մարական սատրապ չէր, այլև այդպիսին չի եղել ընդհանրապես Աքեմենյանների օրոք*[4]*։ Իր տեսակետը նա հիմնավորում է նրանով, որ աղբյուրներն այդ մասին ուղղակի վկայություններ չունեն և որ նման կարծիքը կազմվել է Արրիանոսի տեղեկության հիման վրա, ըստ որի Ատրոպատեսը հիշատակված ճակատամարտում առաջնորդել է մարերին*[5]*։ Բանն այն է, որ, իրոք, աղբյուրներն Ատրոպատեսին սատրապ չեն անվանում։ Բայց դրա փոխարեն վկայում են, որ նա եղել է զինվորական առաջնորդ. մի կարևոր հանգամանք, որն անտեսում է Զ. Յամպոլսկին։ Հայտնի է, որ հին սատրապներն ունեցել են ոչ միայն քաղաքացիական, այլև զինվորական անսահմանափակ իշխանություն, և Ալեքսանդր Մակեդոնացին քաղաքական վերակառուցումների ժամանակ առաջին հերթին սատրապներին զրկում էր հենց զինվորական իշխանությունից։ Ուստի, Ատրոպատեսի՝ զինվորական առաջնորդ լինելու մասին աղբյուրների վկայությունները բավարար հիմք են նրան Մարաստանի*

---

[1] *Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 109,* И. М. Дьяконов, История Мидии, М., 1956, с. 445.

[2] Arrian, Anabasis Alexandri, IV, 18,3.

[3] *Նույն տեղում, III, 8, 4։*

[4] З. И. Ямпольский. Об Атропате, современнике Александра Македонского («Вестник древней истории», 1974, № 2, с. 177).

[5] *Նույն տեղում։*

սատրապ ճանաչելու համար։ Կարծում ենք նաև, որ Ալեքսանդրի կողմից Ատրոպատեսին Մարաստանի սատրապ նշանակելը ևս ցույց է տալիս, որ նա այդ պաշտոնը ստացել է ոչ պատահաբար։

Ճակատամարտի հաղթական ավարտից ու Դարեհ III-ի սպանությունից հետո Ատրոպատեսը, ինչպես և սպասվում էր, հեռացվում է մարական սատրապի պաշտոնից։ Սատրապ է նշանակվում պարսիկ ազնվատոհմիկներից մեկը՝ Օքսոդատեսը։ Նոր նշանակումը պայմանավորված էր վերջինիս ու Դարեհ III-ի գժտությամբ, որն անգամ հասցրել էր Օքսոդատեսի բանտարկությանը։ Սա մի կարևոր հանգամանք էր, որը, ըստ Ալեքսանդրի հաշիվների, պետք է, որ նոր սատրապին իր հանդեպ բարեկամաբար տրամադրեր։ Այս մասին Արրիանոսը գրում է. «Մարաստանի սատրապ (Ալեքսանդրը—Հ. Ս.) նշանակեց պարսիկ Օքսոդատեսին, որին Դարեհը վերցրել և բանտարկել էր Սուզայում։ Այս հանգամանքը Ալեքսանդրի մոտ վստահություն էր ներշնչել Օքսոդատեսի նկատմամբ»[6]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած երկրներում ծագում են հակամակեդոնական շարժումներ, որոնց գլուխ են կանգնում Աքեմենյանների նախկին սատրապները[7]։ Բացառված չէ, որ լայն տարածում գտած հակամակեդոնական այս շարժմանը հարել էր նաև Մարաստանի նոր սատրապ Օքսոդատեսը։ Այս, ավելի քան հավանական, ենթադրությունն ուժ է ստանում նրանով, որ Օքսոդատեսը շուտով հեռացվում է սատրապի պաշտոնից, քանի որ, պատմիչի ասելով, Ալեքսանդրը կասկածներ ուներ, թե նա «իր դեմ շարամիտում էր»[8]։ Հեռացնելով Օքսոդատեսին, Արրիանոսի վկայությամբ, Ալեքսանդրը մարական սատրապությունը վստահում է Ատրոպատեսին[9], որը, ինչպես արդեն ասվել է, այդ պաշտոնը վարել էր դեռևս Աքեմենյանների օրոք։ Նոր նշանակումը ոչ միայն տեղական ազնվականության նկատմամբ Ալեքսանդրի վարած սիրաշահելու քաղաքականության շարունակությունն էր, այլև հզոր աշխարհակալին ծառայելու այն պատրաստակամությունը, որ Ատրոպատեսը ցույց էր տվել Ալեքսանդրին՝ դրանով իսկ շահելով նրա վստահությունը։ Պատմագիտական գրականության մեջ այս ակտը դրակվել է որպես փաստական իրավիճակի օրինականացում[10]։ Սակայն, ինչպես տեսանք, աղբյուրները մինչ Ատրոպատեսի այս նշանակումը Մարաստանի սատրապ են ճանաչում Օքսոդատեսին։ Սա ցույց է տալիս, որ Ատրոպատեսը հեռացվել էր մարական սատրապի պաշտոնից և կրկին նշանակվել միայն 328 թ.։

Այնուհետև Ատրոպատեսի, որպես Մարաստանի սատրապի, մասին վկայությունները ենք հանդիպում Ալեքսանդր Մակեդոնացու հնդկական արշավանքից վերադառնալուց հետո՝ մ. թ. ա. 324 թ. տեղի ունեցած դեպքերի կապակցությամբ։ Դրանցից մեկի համաձայն, Ալեքսանդրը վերադառնալով հնդկական արշավանքից և գալով Սուզա, Ատրոպատեսին ետ է ուղարկում

---

[6] Arrian, III, 20, 3:

[7] Նույն տեղում, 25, 3, 25, 6։

[8] Նույն տեղում, IV, 18, 3։

[9] Նույն տեղում։ Հակառակ Արրիանոսի այս վկայության, Կուրտիոս Ռուփոսը գրում է, որ մարական սատրապի պաշտոնում Օքսոդատեսին փոխարինել է մի ուրիշ նշանավոր պարսիկ, Արսակ անունով (Квинт Курций Руф, История Александра Македонского, М., 1963, VIII, III, 17)։ Արիանոսը ևս հիշատակում է ոմն Արսակի, հավանաբար նույնին, սակայն ըստ նրա, վերջինս նախ ապստամբած Սատիբարզանոսի փոխարեն նշանակվում է Արեյի սատրապ (Arrian, III, 25, 7), ապա մեղադրվում նոր ապստամբություն բարձրացնելու փորձի մեջ (նույն տեղում, III, 29, 5), բռնվում և մահապատժի ենթարկվում (նույն տեղում, IV, 7, 1)։ Այսպիսի մանրամասնությամբ ճանաչելով Արսակին, կարծում ենք, Արրիանոսը չէր սխալվի և, եթե սա նախորդած լիներ Ատրոպատեսին, ապա նա անպայման կարձանագրեր այս փաստը։

[10] Й. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 445, «История Азербайджана», в трех томах, т. I, Баку, 1958, с. 44.

իր սատրապությունը»[11]։ Հետևաբար, Ատրոպատեսին նշանակելով Մարաստանի սատրապ, Ալեքսանդրը, սակայն, դեռ մինչև հնդկական արշավանքից վերադառնալը (մ. թ. ա. 324 թ.) նրան պահել է Սուզայում (Շուշում)։ Այդպես վարվել Ալեքսանդրին հարկադրում էր այն քաղաքական վիճակը, որն առաջացել էր հակամակեդոնական շարժմամբ։ Մասնավորապես, Մարաստանը ևս հակամետ էր այդ շարժմանը, իսկ Օքսոդատեսի օրինակը նրան ստիպում էր զգուշամիտ գործողությունների դիմել։ Ուստի և Ալեքսանդրը, զգուշանալով նոր խռովությունից, Ատրոպատեսին պահում էր իր տեսադաշտում։ Որ մ. թ. ա. 328—324 թթ. Ատրոպատեսն իսկապես հեռու է եղել Մարաստանի քաղաքական կյանքից, երևում է մի շարք իրադարձություններից, որոնք, ինչպես կարծում ենք, տեղի էին ունեցել նրա բացակայության ժամանակ։ Արրիանոսի վկայության համաձայն, մ. թ. ա. 324 թ., այսինքն Հնդկաստանից Ալեքսանդր Մակեդոնացու վերադառնալուց հետո, Ատրոպատեսը ձերբակալում և նրա մոտ է բերում մարացի Բարիաքսոսին, որն ապստամբելով «իրեն հայտարարել էր մարերի ու պարսիկների թագավոր»[12]։ Նրա հետ բռնվել էին նաև ապստամբության մյուս մասնակիցները։ Թվում է, թե հիշյալ Բարիաքսոսը ապստամբել և իրեն մարերի թագավոր է հռչակել՝ օգտվելով այն անիշխանությունից, որը պետք է առաջացած լիներ Ատրոպատեսի բացակայության հետևանքով։

Արրիանոսի մի այլ վկայությամբ Ալեքսանդրը Էկբատանում՝ մարական սատրապության կենտրոնում, գլխավոր գանձապահ էր նշանակել ոմն Հարպալոսի[13], որը, չարաշահելով իր դիրքը, պետական փողերի հաշվին կյանքն անց էր կացնում պերճության ու շռայլության մեջ։ Լսելով տիրակալի վերադարձը, նա, հափշտակելով նաև մնացած գումարը, պատասխանատվությունից խուսափելու համար փախչում է Հունաստան[14]։ Ալեքսանդրը, որ սովորաբար դաժանորեն պատժում էր իրեն անհավատարիմ մարդկանց, անպատիժ է թողնում Ատրոպատեսին, որն իբրև սատրապ պատասխանատու էր իր ենթակայի գործողությունների համար։ Այս հանգամանքը, ինչպես իրավացիորեն նկատել է Ի. Դյակոնովը, խոսում է այն մասին, որ նա մեղավոր չէր Հարպալոսի հանցավոր գործունեության համար, բայց, ոչ թե այն պատճառով, որ Ատրոպատեսն իշխանություն չուներ մարական սատրապության այդ մասի վրա, ինչպես բացատրում է Ի. Դյակոնովը[15], այլ, որովհետև, նշված ժամանակաշրջանում (մ. թ. ա. 328—324) նա փաստական իշխանություն չուներ ընդհանրապես ամբողջ Մարաստանում, քանի որ գտնվում էր Սուզայում։

Այսպիսով, Ատրոպատեսը մ. թ. ա. 328 թ. նշանակվելով Մարաստանի սատրապ, դեռ որոշ ժամանակ հեռացված էր նրա քաղաքական կյանքից, սոսկ անվանապես կրելով այդ կոչումը և միայն մ. թ. ա. 324 թ.՝ հնդկական արշավանքից Ալեքսանդրի վերադառնալուց հետո է թույլտվություն ստանում վերադառնալու սատրապություն և անցնելու նրա փաստական կառավարմանը։ Մինչև Ատրոպատեսի՝ Մարաստան մեկնելը նրան իրեն է՛լ ավելի մերձեցնելու նպատակով Ալեքսանդրը նրա աղջկան կնության է տալիս իր զինակիցներից մեկին՝ մակեդոնական հեծելազորի հրամանատար Պերդիկկասին[16]։

Ատրոպատեսը նոր էր ձեռնամուխ եղել Մարաստանի կառավարմանը, երբ Ալեքսանդր Մակեդոնացին մ. թ. ա. 323 թ. մահացավ, այդպես էլ չլուծելով իր ժառանգորդի հարցը։ Դրան հաջորդեցին երկպառակտչական պատերազմները։ Իշխանության համար կատաղի ու անզիջում էր հատկապես Ալեքսանդրի մերձավորների՝ դիադոխների, պայքարը։ Ալեքսանդրի դիակի շուրջը

---

[11] Arrian, VII, 4, 1:

[12] Նույն տեղում, VI, 29, 3։

[13] Նույն տեղում, III, 19, 7։

[14] Plutarch's Lives, Alexander, XLI.

[15] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 450։

[16] Arrian, VII, 4, 5; Plutarch's Lives, Alexander, LXX:

հավաքվելով, նրանք անցկացնում են մի խորհրդակցություն[17], որը վճռելու էր մակեդոնա-պարսկական երկրների կառավարման հարցը։ Խորհրդակցության հետևանքով Ալեքսանդր Մակեդոնացու հսկայածավալ պետությունը բաժանվեց ազդեցության շրջանների։ Ընդ որում, ինչպես Դիոդորոս Սիկիլիացու[18], այնպես էլ Հուստինոսի[19] վկայությամբ մարական սատրապությունը տրվեց միաժամանակ երկու հոգու՝ Ատրոպատեսին ու Ալեքսանդրի զորավարներից մեկին՝ իլլիրիացի Պիթոնին։ Այս նշանակումներն ինքնըստինքյան հանդեցնում են սատրապական Մարաստանի տարածքի բաժանմանը երկու մասի։ Հուստինոսի մոտ, պատմության մեջ առաջին անգամ, որպես առանձին վարչաքաղաքական միավորներ հիշատակվում են մեծ կամ Հարավային (Ստորին) Մարաստանը, Պիթոնի գլխավորությամբ և Փոքր կամ Հյուսիսային Մարաստանը, որի գլուխ կանգնում է Ատրոպատեսը[20]։ Այս ժամանակից սկսած Ատրոպատեսը կորցնում է իր իշխանությունը Մարաստանի այն մասի նկատմամբ, որը պատկանում էր Պիթոնին։ Հիմք ունենալով վկայակոչված աղբյուրի այս տեղեկությունը, կարծում ենք, որ սխալվում են Ի. Դյակոնովը և նրան հետևողները, երբ գտնում են, որ Ատրոպատեսի իշխանությունը Հարավային Մարաստանի վրա չէր տարածվում ավելի վաղ ժամանակներից[21]։

Բաբելոնի խորհրդակցությունը, սակայն, վերջ չի դնում դիադոխների պայքարին։ Այն բռնկվում է նոր ուժով։ Ստեղծված իրադրությունում Ատրոպատեսը ցուցադրում է քաղաքական գործչի մեծ ունակություն և բարդ իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու նախանձելի հատկություն, իր երկիրը տանելով դեպի անկախություն։ Շատ չանցած այդ անկախությունը դառնում է իրական։ Դա ցույց է տալիս Տրիպարադիսի խորհրդակցությունը, որը հրավիրվում է մ. թ. ա. 321 թ.[22]։ Այդ խորհրդակցությունում տեղի է ունենում սատրապությունների վերաբաժանում, որտեղ, սակայն, բաժանված մարզերի շարքում, ի տարբերություն Մեծ Մարաստանի, ուր կրկին սատրապ է նշանակվում Պիթոնը, Ատրոպատեսի երկիրը չի հիշատակվում[23]։ Այս կարևոր փաստը ցույց է տալիս, որ Փոքր Մարաստանն արդեն գտնվում էր բաժանվող տարածքների շարքից դուրս և ձեռք էր բերել անկախություն[24]։ Այնուհետև Փոքր կամ Հյուսիսային Մարաստան անվանումը կամաց-կամաց տեղի է տալիս և նոր պետության ու թագավորական հարստության հիմնադրի անունով[25] պատմության մեջ սկսում հանդես գալ Ատրոպատյան Մարաստան, Ատրոպա-

---

[17] Juniani Justini, Epitoma Historiarum Philippicarum Pompeyi Trogi, XIII, 4, 4:

[18] Diodorus of Sicily, XVIII, 3, XIX, 12:

[19] Justini, XIII, 4, 13:

[20] Նույն տեղում։

[21] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 450։

[22] Diodorus, XVIII, 39։ Մ. Դյակոնովը Մարաստանի բաժանումը երկու վարչական միավորների կապում է այս խորհրդակցության հետ (И. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, с. 162)։ Սա ճիշտ չէ, որովհետև, ինչպես վերը տեսանք, սատրապության բաժանումը տեղի էր ունեցել ավելի վաղ կայացած Բաբելոնի խորհրդակցությունում՝ միաժամանակ երկու սատրապների նշանակումով։

[23] Diodorus, XVIII, 39:

[24] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 451։

[25] Strabo, XI, XIII, 1։ Ատրոպատեսի անվան շուրջը վիճաբանությունները շարունակվում են։ Ռուսանասիրողների մի մասը գտնում է, որ այն հատուկ անուն չէ, այլ քրմի տիտղոս։ Բարի ստուգաբանական վերլուծությունը՝ «Ատրա—atur—կրակ (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 289, «նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. 1, Երևան, 1979, էջ 336), նման եզրակացության հնարավորություն տալիս է, բայց այս դեպքում այն անկասկած հատուկ անուն է, քանի որ, ինչպես իրավացիորեն նկատել է Ի. Դյակոնովը, եթե տիտղոս լիներ, ապա գործածված պիտի լիներ նաև ինչպես Ատրոպատեսի նախորդների, այնպես էլ հաջորդների նկատմամբ, մի բան, որ չի նկատվում (И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 443, ան. 1)։

տենե, Ատուրպատական կամ (հայկական աղբյուրներում) Ատրպատական, Ատրպայական անվամբ[26]։ Նոր պետության մայրաքաղաքը դառնում է Գանձակը[27]։

Ատրպատականի, որպես ինքնուրույն պետության, առաջացումը պայմանավորված էր ոչ միայն արտաքին քաղաքական հանգամանքներով։ Այն հիմնականում սոցիալ-տնտեսական խոշոր տեղաշարժերի, Մարաստանի տարբեր շրջանների միջև տնտեսական թույլ կապերի հետևանք էր։ Այս հարցում պակաս կարևորություն չուներ և աշխարհագրական գործոնը[28]։

Այսպիսով, Ատրոպատյան Մարաստանի, որպես ինքնուրույն, անկախ պետության կազմավորման ժամանակաշրջան, ինչպես տեսանք, ընդունելի է մ. թ. ա. 323 թ.՝ Բաբելոնի խորհրդակցությունից հետո ընկած ժամանակաշրջանը։ Սակայն Զ. Յամպոլսկին գտնում է, որ «այս պետությունը ծագել և գոյություն է ունեցել ոչ միայն մինչև Ալեքսանդր Մակեդոնացու մահը, այլև մինչև Աքեմենյանների անկումը»[29]։ Ի հաստատումն իր այս եզրակացության, նա վկայակոչում է Պոլիբիոսի մի հաղորդումը, որտեղ մասնավորապես ասված է. «Այս թագավորությունը պահպանվում է դեռևս պարսիկների ժամանակներից, քանի որ Ալեքսանդրի օրոք այն անտեսեցին»[30]։ Իր եզրակացության ամրապնդման համար նա առաջարկում է հունարեն «παροραθεισαν — անտեսեցին» բառը ուղղել «παρορῶ — ճիշտ չտեսան» բառով և բերված վկայության վերջին տողը կարդալ «Ալեքսանդրի ժամանակ նրա (Ատրպատականի—Հ. Ս.) նշանակությունը ոչ բավականաչափ գնահատեցին»[31]։ Կարծելով, թե այս ուղղումով ինքը ցույց է տվել, որ Պոլիբիոսի վերաբերյալ վկայությունն այլ բան չէ, քան Ատրպատականի պետական ինքնուրույնության վաղեմիության արտահայտություն, Զ. Յամպոլսկին շարունակում է պնդել, թե «Ատրպատականը գոյություն է ունեցել հին պարսկական Աքեմենյան հարստության ժամանակներից մինչև նրանց ջախջախումը և, իհարկե, մինչև Ալեքսանդր Մակեդոնացու մահը»[32]։ Նախ, Զ. Յամպոլսկին սխալվում է, իր տեսակետը կառուցելով սոսկ Պոլիբիոսի վկայության հիման վրա, քանի որ հայտնի է Ատրպատականի վերաբերյալ այդ հեղինակի հաղորդումների սխալ ու խառնաշփոթ բնույթը[33]։ Բացի այդ, Պոլիբիոսի վկայության վերջին մասը, որ սկսվում է «քանի որ...» շաղկապով և պետք է համապատեր առաջին մասում հայտնված միտքը, վկայությանը հաղորդում է անկապ իմաստ։ Ստացվում է, որ պետությունը գոյություն ունեը, որովհետև այն անտեսել են կամ գնահատել են ոչ բավականաչափ։ Իսկ Ատրպատականի թագավորության գոյության վաղեմիությունը ցույց տալու համար հիշյալ վկայությունը պիտի ունենար մոտավորապես հետևյալ տեսքը. «Այս թագավորությունը պահպանվում է դեռևս պարսիկների ժամանակներից, միայն թե Ալեքսանդրի օրոք այն անտեսեցին (կամ նրա վրա ուշադրություն չդարձրին)»։ Բայց ինչպես տեսանք, այդպես չէ բերված վկայության մեջ։ Նրա երկու մասերը միմյանց հետ կապ-

[26] Ատրպատական անվանումը հետագայում լեզվական փոփոխությունների ենթարկվելով պարսիկների կողմից սկսել է կոչվել «Ատուրպատական», «Ադրբադագան», արաբների՝ «Ազերբայջան», «Ազերբաջան», ռուսների՝ «Ազերբեյջան» և, վերջապես, ստացել այսօրվա անվանումը «Ադրբեջան»։

[27] Strabo, XI, XIII, 3: Այժմյան Թախտե Սուլեյմանը (Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с, 2, ծան. 1)։

[28] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 450—451։

[29] З. И. Ямпольский, О времени возникновения государства Атропатена («Доклады АН Азербайджанской ССР», т. XXVII, 1971, № 9, с. 108).

[30] Полибий, Всеобщая история в сорока книгах, пер. с. греч. Ф. Г. Мищенко, V, 55, 9.

[31] З. И. Ямпольский, О времени возникновения государства Атропатакана, с. 109.

[32] Նույն տեղում։

[33] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Ա, էջ 110—111։

վում են «քանի որ» շաղկապով և աղավաղում արտահայտության իմաստը։ Ուրեմն, Պոլիբիոսի հիշյալ վկայությունն իր կառուցվածքով (Թեկուզ և Զ. Յամպոլսկու սրբագրումով) ամենևին էլ այն հիմքը չէ, որը կարող է նման եզրակացության հանգեցնել։ Չպետք է նաև մոռանալ, որ մինչև Ալեքսանդրի մահն ու Բաբելոնի խորհրդակցությունը բոլոր աղբյուրները խոսում են Մարաստանի՝ որպես մի ամբողջական տերության մասին, իսկ անտիկ հեղինակներից Հուստինոսն էլ իր պատմության մեջ առաջին անգամ միայն մ. թ. ա. 323 թ. հետո է, որ որոշակիորեն խոսում է իրարից տարբեր երկու քաղաքական-վարչական միավորների՝ Փոքր կամ Հյուսիսային (որը հետագայում տեղի տվեց Ատրպատական անվանը) և Մեծ կամ Ստորին Մարաստանների[34] մասին, որոնք դրանից հետո ունեցան պատմական տարբեր ճակատագրեր։ Ատրպատականը դիտել որպես վաղուց գոյություն ունեցող պետություն, կընշանակի աղճատել Մարաստանի ամբողջական պատմությունը։ Բացի այդ, բավական է հիշել, որ Ատրոպատեսը աղբյուրներում հանդես է գալիս որպես ամբողջ Մարաստանի սատրապ, մի հանգամանք, որ բավարար հիմք է տալիս ժխտելու Ատրպատականի՝ որպես Մեծ Մարաստանից առանձին պետության, գոյությունը մինչև Բաբելոնի վերոհիշյալ խորհրդակցությունը։ Այսպիսով, Զ. Յամպոլսկին սխալվում է Ատրպատականի՝ որպես ինքնուրույն պետության, առաջացման համար այլ ժամանակաշրջան ցույց տալով։ Այն ծագել է միայն ու միայն մ. թ. ա. 323 թ. Բաբելոնի խորհրդակցությունից հետո ընկած ժամանակաշրջանում, բայց և ոչ ուշ, քան մինչև Տրիպարադիսի մ. թ. ա. 321 թ. խորհրդակցությունը, որպես քաղաքական, սոցիալական ու տնտեսական տեղաշարժերի բնական հետևանք։ Ատրպատականը, ի տարբերություն նախկին ողջ Մարական պետության, շուտով հասնում է քաղաքական ու տնտեսական ընդհանրության, որն էլ հանգեցնելով էթնիկական ընդհանրության, պայմանավորում է նրա գոյության անհամեմատ երկար ժամանակամիջոցը։

Ձեռք բերելով անկախություն, Ատրոպատեսը ձեռնամուխ է լինում իր պետության ամրապնդմանը։ Նա կարողանում է հասնել տապյուրների, ամարդների և այլ թափառական ու ավազակաբարո ցեղերի հպատակեցմանը, ստեղծելով բավականին ուժեղ մի պետություն։ Արտաքին քաղաքականության մեջ, ըստ որոշ ուսումնասիրողների, նա, իբր, հասել է զգալի հաջողությունների, իրեն ենթարկելով թե՛ ալբանցիներին[35] և թե նրանցից հյուսիս գտնվող ցեղերին, այդպիսով դառնալով արևելյան Անդրկովկասի վերահսկողը[36]։ Որպես այս կարծիքի հիմք, վկայակոչվում է Արրիանոսի՝ իրեն իսկ կասկածելի թվացող մի հաղորդումը, որի համաձայն Ատրոպատեսը իբր Ալեքսանդրին է նվիրաբերել 100 ամազոնուհիներ[37]։ Նման կարծիքի հեղինակներից մեկը՝ Ի. Դյակոնովը, համաձայնելով պատմիչի հետ, որ վերջիններս չէին կարող ամազոնուհիներ լինել, գտնում է, որ դրանք Կովկաս լեռան այն կողմում ապրող և մայրիշխանությունը պահպանած սավրոմատուհիներն էին, որոնց գերի էր վերցրել Ատրոպատեսը[38]։ Այնուհետև, հենվելով իր այս ենթադրության վրա, Ի. Դյակոնովը անում է հաջորդ եզրակացությունը, ըստ որի, եթե Ատրոպատեսը կարողացել է կռվել և գերեվարություններ կատարել այդքան

---

[34] Justin, XIII, 4, 13.

[35] Հունա-հռոմեական հեղինակներն «ալբանացիներ (ալբանցիներ)—α λβανοι" են կոչում բոլոր այն ցեղերին, որոնք բնակեցնում էին Կովկասյան Ալբանիայի կամ բուն Աղվանքի տարածքը, «որ ընդ մեջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն» («Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», Վենետիկ, 1881, էջ 29»)։ Կովկասյան Ալբանիա և ալբանական ցեղեր անվանումները մենք հոդվածում գործածում ենք հենց վերոհիշյալ իմաստով։

[36] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 446, «История Азербайджана», т. 1, Баку, 1958, с. 45.

[37] Arrian, VII, 13, 2—6:

[38] И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 446։

հեռու բնակվող ցեղերից, ապա նշանակում է, որ նա «ինչ-որ չափով վերահսկել է արևելյան Անդրկովկասը (այժմյան Սովետական Ադրբեջանը), որովհետև, հակառակ դեպքում, նա չէր կարողանա ընդհարվել Կովկասի այն կողմում ապրող սավրոմատների հետ»[39]։ Որպես իր այս եզրակացությունը հաստատող փաստ, Ի. Դյակոնովը վկայակոչում է Արրիանոսի հայտնի հաղորդումը Դավգամելայի ճակատամարտում Ատրոպատեսի ընդհանուր հրամանատարությամբ կռվող ալբանցիների ու կատիշների մասին, որը ըստ նրա, ցույց է տալիս այդ ցեղերի ենթակայությունը Ատրոպատեսին[40]։ Սակայն մարերի հետ ալբանցիների, սակեսինների ու կատիշների այս հիշատակությունը չի նշանակում ենթակայություն Ատրոպատեսից, ուստի այդ հաղորդումը չի կարող լինել վերը բերված եզրակացությունը հաստատող հիմք։ Նման ծանրակշիռ եզրակացության համար, մեր համոզմամբ, հիմք չէ նաև Ալեքսանդրին 100 ամազոնուհիներ նվիրաբերելու մասին Արրիանոսի տեղեկությունը, որովհետև պատմիչը ինքն էլ դրան չի հավատում, իրավացիորեն նկատելով, որ այդ մասին չեն խոսում Ալեքսանդրի այնպիսի զինակիցներն ու արժանահավատ պատմիչները, ինչպիսիք Արիստոբուլոսն ու Պտղոմեոս Լագոսն են[41]։ Ի. Դյակոնովը, սակայն, գտնում է, որ Արրիանոսն իր նշած հեղինակների մոտ չի գտել ամազոնուհիների մյուս սովորությունների՝ կուրծքն այրելու, Ալեքսանդրի հետ նրանց թագուհու կապերի և այլնի մասին պատմությունները, ուստի և ժխտում է միայն նրանց ամազոնուհիներ լինելու և ոչ բուն իսկ նվիրատվության փաստը, շարունակելով պնդել, թե նրա հիշատակած կանայք սավրոմատներն էին, որոնց դեմ կռվել ու գերեվարել էր Ատրոպատեսը՝ մ. թ. ա. 328—324 թթ.[42]։ Սակայն Արրիանոսի համապատասխան հատվածի ուշադիր քննությունը կասկած չի թողնում, որ նա ընդհանրապես Ալեքսանդրի կենսագիրներից և ոչ մեկի մոտ չգտնելով նման «բացառիկ դեպքի մասին»[43] պատմություն, միանգամայն իրավացիորեն ժխտում է ոչ միայն ամազոնուհիների գոյությունն իսկ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, այլև այդ ողջ պատմության իսկությունը[44]։ Ճիշտ է, Արրիանոսը, այնուամենայնիվ, փորձում է որոշ բացատրություն գտնել այդ դեպքի համար[45], սակայն, կարծում ենք, դա սոսկ այն պատճառով, որ դեռևս շատ ուժեղ էր ամազոնուհիների ու Ալեքսանդրի շուրջը հյուսված պատմությունների թողած ազդեցությունը։ Եվ Ի. Դյակոնովն իրավացի է, չընդունելով նրա թեական բացատրությունը, բայց և այնպես նա սխալվում է, այդ բացատրությունը դիտելով որպես նվիրատվության փաստը չժխտող հանգամանք[46]։

Այսպիսով, Արրիանոսի վերոհիշյալ հաղորդումն իր առասպելախառն բնույթով թույլ չի տալիս Ատրոպատեսին վերագրել նվաճումներ այնտեղ, որտեղ այդպիսիք չկան։ Բայց և այնպես, եթե մի պահ ընդունենք էլ, որ Ի. Դյակոնովը ճիշտ է և Ատրոպատեսը, իրոք, կռվել է սավրոմատների հետ և գերեվարություններ կատարել, ապա այստեղ հնարավոր է մի այլ բան։ Ատրոպատեսը սավրոմատների հետ կարող էր ընդհարվել և հաղթել ոչ թե հատուկ արշավանքներ կատարելով դեպի նրանց հեռավոր երկիրը, այլ ճիշտ հակառակը՝ իր իսկ երկրում՝ Ատրպատականում կամ նրա մերձակա շրջաններում, ուր քոչվոր ու ռազմատենչ սավրոմատները Աքեմենյան տերության կործանումից հետո կարող էին հարուստ ավար ձեռք բերելու նպատակով ասպատակությունների դուրս եկած լինել։ Սակայն այս դեպքում էլ Ի. Դյակոնովը դարձյալ ճիշտ

39 Նույն տեղում։

40 Նույն տեղում, էջ 446—447։

41 Arrian, VII, 13, 3:

42 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 448։

43 Arrian, VII, 13, 3:

44 Նույն տեղում, 13, 3—4։ Ընդհանրապես որևէ հարաբերություն Ալեքսանդրի և ամազոնուհիների միջև ժխտում է նաև Պլուտարքոսը (Plutarch's Lives, Alexander, XLVI):

45 Arrian VII, 13, 6:

46 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 445, ծան. 5։

չի լինի, քանի որ նման պարագայում արտաքին նվաճումների, ինչ որ կանանց գերեվարելու և նրա՝ իբր «Արևելյան Անդրկովկասի վերահսկողը» լինելու մասին խոսք անգամ չի կարող լինել։ Որ Ատրոպատեսը չէր կարողանա իր երկրի սահմաններից դուրս նվաճումներ կատարել, ցույց են տալիս նաև այն քաղաքական դեպքերը, որոնք հաջորդում են մ. թ. ա. 328 թ., այսինքն, Ատրոպատեսին մարական սատրապ նշանակելուն։

Նախ, ինչպես տեսանք, նշանակվելով սատրապ, Ատրոպատեսը դեռ որոշ ժամանակ՝ մ. թ. ա. 328—324 թթ. Ալեքսանդրի պահանջով մնացել էր Սուսայում։ Ուրեմն, այդ տարիներին նա ոչ միայն չէր կարող զբաղվել սատրապության գործերով, այլև նվաճումներ կատարել։ Ուրեմն, Ի. Դյակոնովը ճիշտ չէ, երբ որպես Ատրոպատեսի շեղած նվաճումների ժամանակաշրջան է ցույց տալիս հենց մ. թ. ա. 328—324 թթ.[47]։ Այնուհետև վերադառնալով Մարաստան, Ատրոպատեսը հարկադրված է լինում ճնշելու Բարիաքսոսի ապստամբությունը և դրա արձագանքները երկրի տարբեր մասերում։ Ներքին խռովություններին վերջ տալուն, առանձին ցեղերին հպատակեցնելուն ու երկրի ներքին դրությունը կայունացնելուն հաջորդում է Բաբելոնի մ. թ. ա. 323 թ. խորհրդակցությունը, որտեղ Ալեքսանդրի տերության բաժանումից հետո ստեղծված խռովահույզ ու անհանգիստ քաղաքական իրադրությունը[48] Ատրոպատեսին ժամանակ չէր տա մտածելու արտաքին նվաճումների մասին։ Վերջապես, մակեդոնական նվաճողական քաղաքականության ավանդույթները որդեգրած Սելևկյան տերության առաջացումը մ. թ. ա. 312 թ.[49] և բուն Մարաստանում[50] նրա նվաճումները, անշուշտ, Ատրոպատեսին ավելի շատ հարկադրելու էին մտահոգվելու իր երկրի անկախության, քան նվաճումների հարցերով։ Պետք է նկատել, որ ոչ միայն Ատրոպատեսը, այլև նրա մերձավոր հաջորդներն էլ էին հեռու նվաճումներից և ավելի շատ մտահոգված էին սեփական երկրի անկախության ապահովմամբ։ Պատահական չէ, որ միայն Ատրոպատեսից գրեթե մեկ դար հետո՝ մ. թ. ա. III դ. 20-ական թվականների վերջերին է Ատրպատականը հիշատակվում[51], որպես Առաջավոր Ասիայում տեղի ունեցող իրադարձություններին մասնակից երկիր։

Այսպիսով, ճիշտ չէ որոշ ուսումնասիրողների այն կարծիքը, թե Ատրոպատեսն արտաքին նվաճումներով կարողացել է տիրապետել արևելյան Անդրկովկասի ցեղերին, մասնավորապես, ալբանցիներին։ Վերջիններս այդ շրջանում հանդես էին գալիս որպես ինքնուրույն ու անկախ ցեղեր։ Նրանց այդ ինքնուրույնությունն ու անկախությունը սկիզբ էր դրվել դեռևս Աքեմենյանների կործանմամբ ու Ալեքսանդրի հաղթությամբ։

Առաջացած մակեդոնական լայնածավալ տերությունը, որն իր իշխանությունն էր տարածել Աքեմենյանների ենթակայության տակ գտնվող երկրների վրա, անդրկովկասյան երկրների ժողովուրդների, մասնավորապես ալբանցիների նկատմամբ որևէ իշխանություն չուներ։ Այդ է ամենից առաջ ցույց տալիս Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի երթուղին, որն ըստ ուսումնասիրողների անցել է Փոքր Ասիայի հարավային մասերով դեպի Եգիպտոս, ապա հյուսիսային Միջագետքով Բաբելոն ու պարսկական մարզեր և, դուրս գալով Միջին Ասիա ու Հնդկաստան, հարավով կրկին վերադարձել է Բաբելոն[52]։ Այնուհետև, հայտնի է, որ Ալեքսանդր Մակեդոնացու գործունեության կարևոր ու առանձնահատուկ կողմերից մեկը նվաճված երկրներում սոցիալ-տնտեսական, ռազմական ու քաղաքական ամուր հենարան ստեղծելու նպատակով քաղաքների կառուցումն էր։ Ալեքսանդրի գործունեության հենց այդ կողմն էլ

---

47 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 448։

48 Justini, XIII, 6, 1—20; Plutarch's Lives, Emen, I-XIX:

49 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 164։

50 Strabo, XI, 14, 15; А. Б. Ранович, Эллинизм и его историческая роль, М.—Л., 1950, с. 88, 92.

51 Полибий, Всеобщая история, V, 55, 1—2.

52 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 152—153 ներդիր քարտեզը։

նկատի ունենալով, Ս. Կրկյաշարյանն իրավացիորեն եզրակացրել է, որ Հայաստանը մակեդոնացիների կողմից չէր նվաճվել, քանի որ այստեղ «չի հանդիպում և ոչ մի քաղաք, որ կառուցված լիներ Ալեքսանդր Մակեդոնացու կամ նրա հետևորդների կողմից»[53]։ Խնդրին այս տեսակետից մոտենալով ու հաշվի առնելով, որ ուսումնասիրվող շրջանում Ալբանիայում ոչ միայն չեն հանդիպում Ալեքսանդրի կամ նրա հետևորդների կողմից կառուցված քաղաքներ, այլև ընդհանրապես քաղաքներ բառիս իսկական հասկացությամբ, տարակույս չի մնում, որ Ալբանիան նույնպես չէր նվաճվել մակեդոնացիների կողմից։ Եվ, վերջապես, աղբյուրները, որոնք խոսում են Առաջավոր Ասիայում տեղի ունեցող քաղաքական մեծ փոփոխությունների, տիրապետությունների բաժանման, «առանձին նվաճողների բարձրացման ու ազդեցության շրջանների վերաձևման համար սուր, կատաղի ու անզիջում պայքարի մասին, ընդհանրապես լռում են ալբանցիների մասին։ Այս պերճախոս լռությունն ալբանցիների ինքնուրույն, անկախ կյանքով ապրելու մասին վառ վկայություն է։

Այսպիսով, ալբանցիները Մակեդոնիայի հաղթանակով, ազատվելով Աքեմենյանների ենթակայությունից, չէին ընկել մակեդոնացիների իշխանության տակ։ Իրենց այս անկախությունն ու ինքնակալությունն ալբանցիները պահպանել էին նաև հետագա շրջանում, մասնավորապես, Ատրոպատենի ժամանակներում, քանի որ, ինչպես տեսանք, ստեղծված քաղաքական պայմանների պատճառով նա չէր կարող իր ծառայությանը ենթարկել նրանց։

ВОЗНИКНОВЕНИЕ ГОСУДАРСТВА АТРОПАТЕНЫ И КАВКАЗСКАЯ АЛБАНИЯ

ГЕНРИХ СВАЗЯН

Резюме

После упразднения Ахеменидской державы Александр Македонский в 328 г. до н. э. сатрапом Мидии назначил Атропата— одного из военачальников и сатрапов Дария III.

Судя по материалам первоисточников, несмотря на то, что Атропат был назначен сатрапом Мидии, Александр все еще держал его в Сузах. Такое решение Александра было продиктовано определенным описанием—тем, что Атропат может примкнуть к антимакедонскому движению, охватившему все подвластные Александру сатрапии. Лишь после завершения индийского похода (324 г. до в. э.) Александр разрешил Атропату вернуться в свою сатрапию. В исторической литературе существует точка зрения, согласно которой албанцы, жившие севернее Куры, между Курой и Главным Кавказским хребтом,были подвластны Атропату. Однако этого не могло быть, ибо международная обстановка того времени, вызванная кровопролитными войнами диадохов, вынуждала Атропата скорее всего думать о сохранении независимости и целостности своего государства, нежели о внешних завоеваниях. Албанцы продолжали сохранять свою самостоятельность, которую они приобрели после падения Ахеменидской державы.

---

53 Ս. Մ. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության շրվագներ, Երևան, 1970, էջ 106։